

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՄԵՆ ՄԻՒՍԱՑԱՆ

ԲԱՐԿԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՍՔԱՆԴԱԿՆԵՐԸ 4—7-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ, 1949 թ., 119 էջ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարական պատմական գիտությունների թեկնածութարկեն Առաքելյանի «Հայկական պատմաբանագիտություն» խորագրով 4—7-րդ դարերում:

Մենագրական այս աշխատանքը մի փորձ է ի մի հավաքելու մեջ հասած հայտնի հրատույն հայկական քանդակները, որոշելով նրանց տեղն ու դերը հայկական կուպուրայի պատմության մեջ:

Հայկական պատկերագանդակը, չնայած մինչև այժմ առանձնահատուկ ձևով ոչ ոքի կողմից չի ուսումնասիրված, բայց նրա հետ կապված որոշ խնդիրներ քննվել և լուսաբանվել են հայագիտության մեջ: Առանձնապես մեծ արժեք ունեն ակադեմիկոս Ն. Յա. Մատի, ինչպես և Անիի պեղուաներին մասնակցող նրա աշխատակիցներ՝ Ի. Ա. Օրբելու և ճարտարապետ Թորոս Թորամանյանի ուսումնասիրությունները:

Արտասահմանում ևս լույս են տեսել հայկական արվեստին նվիրված մի քանի ուսումնասիրություններ, որոնց մեջ բավականաշափ խոսվում է և նյութ է հավաքված հայկական ճարտարապետության, ինչպես և քանդակագործության մասին, Սակայն վերջին հեղինակների աշխատություններում իշխում է արևմտյան երոպական գիտնականների շրջանում լայն տարածում գտած ձեւական-տեղադրական համեմատական մեթոդը, աղդեցությունների և պարզ փոխառությունների տեսությունը, ըստ որի հայկական արվեստը դիտվում է ոչ որպես ինքնուրույն արվեստ, այլ կը որդի հրանի, թյուղանդիայի և դրացի այլ երկների:

«Հայկական պատկերաբանագիտություն» աշխատության հեղինակը մանրամասն քննելով հին հայկական քանդակագործությունը, կոնկրետ փաստերի հիման վրա ժիտում է այն փոխնականների պնդումը, ըստ որի, իբր թե, հայկական քանդակագործություն գոյություն չի ունեցել և եղած մի քանի նմուշները հազվագյուտ բացառություններ են: Հեղինակը ցույց է տալիս, որ հայերն ունեցել են սյուժետային

քանդակագործություն, և պատվերագանդակները Հայաստանում 4—7-րդ դարերում եղակի չեն և ոչ էլ բացառություն, այլ նրանք բավականին տարածված են եղել և ունեցել են որոշակի տեղ:

Հեղինակն իր այս աշխատության 1—2-րդ գլուխներում պարզաբանում է քանդակագործության և արվեստի հարակից ճյուղերի ընդհանուր վիճակը 4—7-րդ դարերում, քանի որ պատկերագանդակները պայմանավորվում են մշակույթի և արվեստի զարգացման տվյալ աստիճանով:

Ի. Առաքելյանը հայ կուտուրայի պատմության մեջ 4—7-րդ դարերը բնորոշում է որպես տեղական կուտուրայի նոր աստիճանի ձևագործման և զարգացման շրջան, երբ հայկական կուտուրան ունեցավ ուշագրավ նվաճումներ և հասավ զգալի բարձրության: Հայկական մշակույթի այդպիսի աննախընթաց վերելքը համընկնում է երկրում ավատական հարաբերությունների խորացման, հայ ժողովրդի ապստամբության հզոր ալիքի և կարսկական տիրապետության դեմ նրա ծավալած հերոսական պայքարի հետ (450—451, 481—484, 570—572 թ. թ.):

Ծնորհիվ այդ ապստամբությունների, պարսիկների տիրապետությունը Հայաստանում զգալիորեն թուլացավ: Այս հանգամանքը նախադրյալներ ստեղծեց և նշանակալից դեր խաղաց 5—7-րդ դարերի Հայաստանի տնտեսական և կուտուրական վերելքի համարը Հեղինակն այս ժամանակաշրջանը համարում է հայկական կուտուրայի զարգացման նշանակալից շրջան: Նրա կարծիքով, այդ կուտուրան դրսմուրվում է որպես ինքնաւորությունների տեսությունը, ըստ որի հայկական արվեստը դիտվում է ոչ որպես ինքնուրույն արվեստ, այլ կը որդի հրանի, թյուղանդիայի և դրացի այլ երկների:

«Հայկական պատկերաբանագիտություն» մեջ հեղինակը մանրամասն տեղեկություններ է տալիս հայկական նշանակուր ճարտարապետական հնագույնների մասին: Դեռ հին ժամանական կենացարձաններից ժամանակած քարակոփությունը և շինարարական արվեստը հնարավորություն էին տալիս հայերին աշքի ընկնող կառուցումներ կատարել: Դմինի, Օձունի, Պտղնիի, Ավանի, Հոփիսիմերի, Թալինի, Բրինդի և բազմաթիվ մանրամասներ, և 7-րդ դարի դարի հայկա-

կան ճարտարագետության գլուխ գործոց հանդիսացող ջվարթնոց եկեղեցու ճարտարապետական հոյակապ կառուցումները հարդարվում էին բազմազան զարդաքանդավներով, որոնք հիացմունք են առաջանառ իրենց արտահայտչությամբ, փառահեղությամբ և, առածին դեպքերում, նաև իրենց ռեալիզմով:

Աշխատության Յ-րդ գլխում դասավորված և ընդհանուր գծերով քննության են առնված դամբարանների և մահարձանների մի քանի.

Աշխատության հիմնական մասն են կազմում 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխները:

4-րդ գլխում («Կրոնական պատկերաքանդակներ») խոսվում է կրոնական պատկերաքանդակների դերի ու նշանակության, քանդակների հնագույն՝ 4—5-րդ դարերի խմբի, մահարձանների վրա հանդիպող քանդակների և 6—7-րդ դարերի եկեղեցիների վրա գտնվող կրոնական քանդակների և քրիստոնեական պատկերաքանդակների մասին: Քննարկելով 4—7-րդ դարերի քրիստո-



Բ. Առաքելյանի աշխատության իլուստրացիայից (Ցուլ-Մպճի)

եսակներ, որոնք մինչև այժմ կամ ուսմասիրված չեն, և կամ ուսմասիրվել միշանկալ ձևով: Կատակոմբային տեսակի դամբարանների (ամենանշանավորը րշակումյաց դամբարանն է Արագածի լան), Աղյուսակով), սյունանման քառակողմուղանների, Աղուղի (Սիսիանի շրջան) և Օտոնի (Գուգարք) մահարձանների քննությունը հեղինակը կատարել է աշխատության մասն կազմող քանդակների համեմատան ուսմասիրության հիման վրա: Այդ սննդակները ունեն քրիստոնեական-կրոնական բովանդակություն: Պատկերված են Հին Նոր Կտակարանների զանազան տեսաներ և հայկական որոշ ավանդությունների:

Նեական պատկերաքանդակները, հեղինակը գալիս է հետևյալ եղակացության:

ա.—Հայաստանն ունեցել է կովտորական սերտ կապ հարևան երկրների հետ, որը և արտացոլվել է նրա քանդակագործության մեջ:

բ.—Վաղ-քրիստոնեական ընդհանուր սյուժեներում, հայերը ազգային արվեստի առանձնահատկությունները դրեցին ո՞չ միայն ձևի, այլ նաև կառուցվածքի մեջ:

գ.—Այն քանդակները, որոնք ունեն քրիստոնեական բովանդակություն, համեմատարար, պրիմիտիվ են: Սա բացատրվում է ո՞չ միայն քանդակագործության զարգացման ցածր աստիճանով, փորձի և տովորությունների պակասով, այլև սյուժեների նկատ-

մամբ ունեցած վերաբերմունքով, քանի որ քրիստոնեական եկեղեցու համար կարեոր էր ոչ այնքան կատարման, վարպետությունը, որքան քրիստոնեական բովանդակությունը: Բայց որում, կրոնական բովանդակությունը ունեցող քանդակներում մենք համբաւում ենք Հայաստանի ժողովրդական աշխարհիկ և հեթանոսավան պատկերացումների:

Աշխատության 5-րդ գլխում քննարկված են աշխարհիկ սյուժեները: Թեպետ նրանց թիվը մեծ չէ, այնուհանդեռ, այդ փոքրաթիվ քանդակները իրենցից ներկայացնում են բացառիկ հետաքրքրություն:

Աշխարհիկ սյուժեներում արտացոլված են ազնվավանների կենցաղի մի քանի կողմեր (գաղանների որսը, իշխանի շքերթը) և աշխատավոր բնակչության զբաղմունքը (այգեկովի, կառուցող վարպետներ և այլն):

Ազնվականների կենցաղը պատկերող քանդակների և Սասանյան քանդակների միջև հեղինակը տեսնում է որոշ նմանություն, որը հեշտ է բացատրել, ի նկատու ունենալով այն, որ հայ ազնվական վերնախավը ո՞չ միայն ընդհանուր կապեր ուներ պարսկական վերնախավի հետ, այլ և համաման գաղափարախախոսություն և կենցաղ:

Հեղինակը կոնկրետ օրինակներ է բերում թե ո՞քան կատարյալ և արգելատի տեսակետից բարձր են այն քանդակները, որոնց մեջ արտացոլվում է աշխատավոր ժողովրդի կյանքը:

Աշխատության 6-րդ գլխում նվիրված է առասպելական և ինորհրդանշական (սիմվոլիկ) բնույթի քանդակներին:

Այս երեք գլուխներում հեղինակն աշխատել է, բայց էտության, քննության ենթարկել այլաբանական-առասպելական սյուժե ունեցող քանդակները, պարզել նրանց նշանակությունը, բացահայտել նրանց պատմական արժեքը, ժամանակը և քանդակների այս երեք տեսակները ենթարկել ոճական վերլուծման:

Հեղինակը, սակայն, չի բավարարվել այս ամենով: Նա ցուց է տաղիս քանդակագործության զարգացումը, նրա վիճակը, տեղական ինքնուրուցին, նոր ոճի առաջացումը և նրա կապերը հարևան երկրների քանդակագործության հետ: Բ. Առաքելյանը կանգ է առել նաև իշխանների և աշխատավոր ժողովրդի կենցաղի, ճաշակի վրա և այլն:

Աշխատության 7-րդ գլխում («Ալբինստ և արվեստ») խոսվում է արհեստների և արվեստների կապի մասին: Հեղինակը փաստերով ապացուցում է, որ եղնելով լեզվի, նյութական կուտուրայի տվյալներից, կարելի է ենթադրել, թե որոշ արվեստների և արհեստների բաժանումը 4—7-րդ դարե-

րում արդեն սկիզբ էր առել և առանձին բնագավառներում բավականաշափ առաջ էր գնացել:

Աշխատության վերջում Բ. Առաքելյանն անդրադառնում է հայկական քանդակագործության ակունքներին և արմատներին: Հեղինակի կարծիքով, քանդակագործությունը 4—7-րդ դարերում ունեցել է երեք հիմնական ակունք: առաջինը՝ հայերի հեթանուական անցյալը և նրանից ժամանակված կուտուրան, համբաւությունները, պատկերացումները, ավագանության վաղ-քրիստոնեական աշխարհի հետ, և, երրորդ՝ հարևան ժողովուրդների կուտուրաներից յուրացված տարրերը:

Հեղինակը համուգիշ փաստեր է բերում թե ի՞նչպես էր ժողովուրդը զարգացնում իր կուտուրան, ի՞նչպես էր իր ճաշակն ու ըմբռունումները մտցնում քանդակների մեջ, ի՞նչպես էր օգտագործում բոլոր հնարավորությունները՝ դրսեվորելու իր արվեստը ժողովրդական հարազատ բովանդակությամբ:

Քանդակագործական արվեստի այնպիսի բնագավառ, ինչպիսին էր բոսական և երկրաշափական ձևերի քանդակագործությունը, ինչպես և ժողովրդական ավանդություններն ու պատկերացումներն արտահայտող բազմազան և բազմաթիվ քանդակներ, ավելի փարթամորեն ծաղկեցին և զարգացն 4—7-րդ դարերում:

Հայկական քանդակագործության մյուս ակունքը՝ հարևան ժողովուրդների կուտուրաներից յուրացված տարրեր էին: Հեղինակը ցուց է տալիս, որ ընդհանձակ և սերտաւ են եղել հայկական կուտուրայի և հարևան ժողովուրդների կուտուրական կապերը:

Այս կապակցությամբ, Բ. Առաքելյանը, իրավագիորեն, քննադատում է երրուսական այն գիտնականներին, որոնք միտուանավոր կերպով հայկական կուտուրան և արվեստը համարում են որպես ասորական, իրանական, բյուզանդական կամ արաբական կուտուրաների և արվեստի ազդեցության հետապես առաջատար կերպով, կես կցորդ, ինչպես և տեղական գիտնականներից նրանց, ովքեր հայկական արվեստն անցրացնում էին, բացառում էին նրա սերտ կապը հարևան երկրների արմեստի հետ՝ դրսեվորելով իրենց սահմանափակվածությունը:

Երականում, ստեղծելով և զարգացնելու վեհական կուտուրան, հայ ժողովուրդը ոչ միայն շնելուսացավ իր արևելյան և արևմտյան հարևաններից ու նրանց կուտուրաներից, այլ առավել ընդհանձակեց իր կապերը՝ հանդիս գալով որպես ավելի ակտիվ:

մասնակից հարևան ժողովուրդների հետ ունեցած փոխհարաբերության մեջ՝ կուտուրական ստեղծագործության լուրջ ներդրումներով հարստացնելով կուտուրայի ընդհանուր գնաճարանը:

Հայկական ճարտարապետության և քանդակագործության շատ ձևեր անցել են հարևան երկրներ և ավելի հեռում. հայկական ծագում ունեցող վարագի հետ մենամարտի



Պատկերաբանդակ՝ մենամարտը
վարագի հետ

առասպելական սյուժեն անցել է եվրոպա, բյուզանդական սրբապատկերների և նրանց միջոցով սրբապատկանի մեջ անցած մի քանի ձևերի աղբյուրը (օրինակ՝ Տիրամայրը գահույթի և բարձի վրա նստած, քանդակների արևելյան զգեստավորումը և այլն) նույնպես պետք է փնտոել Հայաստանում և, ընդհանրապես, Կովկասում:

Մեծ է հայերի և Կովկասյան մյուս ժողովուրդների կուտուրական ազդեցությունն ու ստեղծագործական մասնակցությունը բյու-

զանդական կուտուրայի, արվեստի և, մասնավոր ճարտարապետության մեջ:

Ինչ վերաբերում է հայոց, վրաց և աղվանից կուտուրաներին, ապա նրանք զարգացել են ամենամերա ու հարատես կապակցության մեջ, փոխադարձաբար նպաստել և հարտաշըրել կուտուրայի:

Հին հայկական քանդակագործության և, մասնավորապես, պատկերագանդակների մասին դրված այս արժեքավոր աշխատությունը ցույց է տալիս, որ քանդակագործությունը 4—7-րդ դարերում Հայաստանում հասավ բարձր զարգացման, ստեղծվեցին բարձրարժեք գեղարվեստական ձևեր, հատկապես երկրաշափական և բուսական դրվագների (օրինամենտների) բնագավառում:

Մենք այսուել չենք ուզում կանգ առնել վիճելի մի քանի հարցերի վրա, որոնք կապված են պատկերագանդակների բնույթի, խմբագորման, զարգացումը խթանող պատճառների և նեղ մամնագիտական այլ հարցերի հետ, որոնց վերաբերմամբ մենք այլ կարծիք ունենք:

Շուրջ 170 էջից ամփոփող այս աշխատությունը շարադրված է խնամքով: Նյութը տրված է պարզ, յուրաքանչյուրի համար հասկանալի կերպով:

«Հայկական պատկերագանդակները 4—7-րդ դարերում» աշխատությունը կարելի է հանձնարարել ինչպես պատմաբաններին ու արվեստագիտներին, այնպես և հայ ժողովրդի բազմադարյան կուտուրայով ու արվեստով հետաքրքրությունը յուրաքանչյուր անձնավորության:

Գիրքը հրատարակված է խնամքով, յավարակ թղթի, վրա: Նկարիչ Լ. Սադոյանի գիխազարդերը, վերնագրերը, գրչանկարները և կազմի ձևավորումը արտահայտի կերպով կատարված են շարադրանքի բովանդակության հետ:

Աշխատության վերջում, որպես հայկելիքած, տրված են 4—7-րդ դարերի հայկական քանդակագործության առավել նշանավոր հուշարձանների լուսանկարները, թիվով 81 հատ:

